ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1, հեռ. (+374 11) 514 200, ֆաքս՝ (+374 11) 514 004, էլ.փոստ՝ mayor@yerevan.am

№ 01/61-12493

«025» 10 2018թ.

«ԿԱՐՊ-ԳԱԶ-ՌԱԴ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ Հ. ԲԵԳԼԱՐՅԱՆԻՆ
ՀՀ Կոտայքի մարզ ք. Եղվարդ, Պ. Սևակի 3/7

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

Պայմանագիրը մասնակի միակողմանի լուծելու մասին

Հարգելի պարոն Բեգլարյան

Երևանի քաղաքապետարանի և «Կարպ-Գազ-Ռադ» ՍՊԸ -ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 27.05.2018 թվականին կնքված «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/33-2» ծածկագրով աշխատանքների գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ «Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա Նոր Նորք վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար»:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ «Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի Տեխնիկական բնութագրին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան»:

Պայմանագրի 3.4.1 կետի համաձայն՝ «Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ Տեխնիկական բնութագրին և ծավալաթերթին համապատասխան»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Պայմանագրի ժամկետի ավարտը սահմանված է սույն թվականի օգոստոսի 31-ը և Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի 14.10.2019 թվականի թիվ 27/21350 գրություն համաձայն՝ Ընկերությունը պայմանագրով ստանձնած պարտավորությունները կատարել է մասնակի, Երևանի քաղաքապետարանը ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով, միակողմանի, մասնակի (11249019 ՀՀ դրամի չափով) հրաժարվում է Ընկերության հետ կնքված Պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն մասնակի լուծված:

Միաժամանակ՝ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետի համաձայն՝ «Պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից.»:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **Հ. ՍԱՐԳՍՅԱՆ**

Կատ՝ Է. Կիրակոսյան
Հեռ. 011514 129